

եղանակները միօրինակ են: Կոմիտաս վարդապետ հոյակապօրէն ապացուցեց, և իր մի շարք աշխատութիւններով պատրաստում է հռչակել, որ մենք ունենք ազգային՝ հարուստ, երկններանգ, խորունկ մի երաժշտութեան բոլոր տարրերը: Կարող ենք դարձնել հպարտանալ, որ մեր դժբաղդ, բազմաշարձար ցեղը, իր յաւիտենական մարտիրոսութեան մէջ, ժամանակ ու արիւթիւն է գտել ստեղծելու մեծութիւն, գեղեցկութիւն և յուզում...

Տ. Զաւէն

III ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Ժայռ», դրամա, 4 գործ., հեղինակութիւն Վ. Փափազեանի:

Հայոց Դրամատիկական խումբը ապրիլի 7-ին ներկայացրեց մի նոր, ինքնուրոյն բեմական գրուածք, պ. Վ. Փափազեանի «Ժայռ» դրաման:

Այդ գրուածքի ամենագլխաւոր հետաքրքրութիւնը կայանում է նրանում, որ առաջին անգամ մեր բեմի վրայ դուրս է բերւում հայ գիղական կեանքը իրական գծերով: Մինչև այժմ հայ դրամատուրգները նկարագրում էին մեր քաղաքային միջնավայրն իր տիպերով, իսկ պ. Փափազեանի «Ժայռի» մէջ հանդէս են գալիս հայ տրեխաւորները իրանց բնորոշ տարածով, խօսակցութիւններով և աշխարհայեցողութեամբ: Գիղաւոր կան կեանքի ցաւերից մէկն էլ վաշխառուն է, որի գոյութեան և զբարգաւաճման նպաստում են իրականութեան ընդհանուր լուրի պայմանները: Եւ երբ, այդ իրականութեան մէջ երեւան է գալիս մի իդէալիստ անհատ, «Ժայռի» մէջ յանձին նորաւարտ փաստաբանի, որ մասնակի դէպքերի դէմ է լարում իր ամբողջ ոյժը, նա, ի հարկէ, վերջ ի վերջոյ, յաղթահարւում է դոյութեան պայմաններին յարմարուած ճարպիկ «գործիչներից»: Վաշխառուն շրջապատող պայմաններում գտնւում է իր ճարպիկ մաքառման համար հաստատ հող. օրէնքի բացատրողները և կիրարկողների մեծագոյն մասը նման չեն անփորձ իդէալիստ Ալէքսանդր Մանուկեանին, այլ այն հաշտարար դատաւորին (Մատվէյ Եգորիչ), որին այնքան լաւ բնորոշեց իր խաղով պ. Պետրոսեանը: Ընդհանուր պայմանները շնորհիւ

գիւղերում անխիղճ «աբլակատ»-ները աւելի են գործ տեսնում, քան համալսարանական աղվակատները: Անճար գիւղացուն գեղեցիկ խօսքերը հաց չեն տալիս, վարկ չեն բաց անում և նա վերջ ի վերջոյ էլի պէտք է ձեռք կարկառի վաշխառւին, նրանից պարտք վերցնի: Կրթութիւնը դեռ չի խորտակել մեր ընտանեկան և այլ բազմաթիւ նախապաշարումները, և ահա վաշխառուի աղջիկը անկարող է լինում ազատուել «հասարակական կարծիքի» ճնշումից: Եւ քանի կենդանի են այդ բոլոր ընդհանուր պայմանները, վաշխառու Գրիգոր աղան և իր նմանները միշտ կարողանալու են ճարպիկութեամբ օգտուել իրանց դրութիւնից:

«Ժայռը», իբրեւ պ. Վ. Փափազեանի առաջին բեմական գրուածքը, ընդհանուր առմամբ ապացուցեց որ հեղինակը կարող է աշողութիւն ունենալ բելլետրիստիկայի և՛ այդ ճիւղի մէջ. պէտք է աշխատի սակայն խոյս տալ տեղ-տեղ տեսարանների ձգձգութեամբութիւններից և մենախօսութիւնների հնացած ձևերից:

Դերասանական խումբը իր խաղով նպաստեց այդ դրամայի աշողութեան. շատ տիպիկ էին պ. Յարութիւնեան վաշխառուի դերում և պ. Աւետեանը գիւղական աբլակատի, (քաչալ-Մարտիրոս) դերում. գիւղացիների ըէալ տիպեր ստեղծեցին և պ. պ. Տէր-Դաւթեանը և Արէլեանը: Մտածուած և տեղ-տեղ նոյնիսկ տպաւորիչ էր տ. Մայսուրեանի խաղը վաշխառուի աղջկայ դերում:

S.